


ՏԵՐԵՆ-ԽՄԲԱԳԻՐ
ՅԱՐՈՒԹԻՒՆ ԱԼՓԻԱՐ

Նամակ կամ որ եւ գրութիւն
պէտք է ուղղել առ

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ՓԱՐՈՍ ԼԵՍԳՐԻ
Պաշար Մուրուր, ԳԱԶԻԻԷ

Direction du journal PAROS
Bazar Mourour, CAIRE Egypte



Լ Ր Ա Փ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԶՈՐԵԲՇԱԲԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ ՕՐԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ներդրումի համար տրեկին ողջ դի. 80
» » վեցամսեայ » 50
Օսար եւ իրենց տարեկան ֆրանկ 25
» » վեցամսեայ » 14
Թղթասարի ծախքը խմբագրու-
թեան վրայ է :

Խմբագրութեանն ուղղութեամբ մա-
մակ կամ այլ գրութիւն եւ չի տրուիր

ՓՈԽԱԴԱՐՁ ԻՐԱՒՈՒՆՔ

Հանրային կեանքի մէջ պարտքի կատար-
ման և իրաւունքի վայելման փոխադարձ գը-
րութիւնը շատ ամփոփ ու գործնական կեր-
պով ի յայտ կուգայ ազգային տուրքի ձեւին
տակ զոր խորհրդեր են մեր Սահմանադրու-
թեան հեղինակները :

Եզրագրութիւն վիճակն ալ, թէեւ քիչ մը
ուշ, կուգէ գործադրել այդ գրութիւնը, ինչ-
պէս երեւցաւ Առաջնորդարանի Դիւանատու-
նէն հաղորդուած վեկոյցին մէջ զոր հրատա-
րակեցինք նախորդ թիւով : Առաջին ապաւո-
րութեամբ, գտնուին թերեւս ոմանք որոնք
տեսակ մը գեղեցիկութիւն կամ գեղամակու-
թիւն արտայայտեն . բայց եթէ լրջօրէն խորհ-
ուի արուած որոշումին վրայ, պիտի տեսնուի
որ, ընդհակառակն, անոր հաստատումը կոչ-
ուած է առաջը առնել ժողովրդային կարգ
մը գանգատներու և արտոնչներու : Ի՞նչ է
եղած ատոնց շարժառիթը տարիներէ ի վեր :
Ընդհանուր ժողովը — կըսեն — և անկից
բխող վարչութիւնը կը մնան նոյն չղանակին
մէջ, գրեթէ անփոփոխ . ընտրութիւնները կա-
տարուած են աւանդական յանկի մը վրայէն
ուսկից շատեր գուր մնացած էին . երեսփո-
խաններէն հրաժարածներ կան ու յաջորդին
չէ ընտրուած . և այս և այն : Արդ, որչափ
որ կրցանք ըմբռնել ներկայ որոշումէն, երես-
փոխանական ու Գաղաքական ժողովները կը
յայտարարեն թէ այսուհետեւ ազգային տուր-
քը հիմ պիտի բռնուի ընտրողական իրաւանց,
այսինքն թէ ընդի կամ երեքէն հինգ տարիէ
ի վեր Եզրագրութեան հաստատուած այն բոլոր ազ-
գայինները որոնք առնուազն տարեկան 25
դրչի տուրքը վճարած ըլլան, ընտրողական ի-
րաւունք պիտի ունենան : Սահմանադրութեան
տարրական սկզբունքներէն մէկն է այս որ
գործադրութեան կը դրուի, մեր վարչական
ներքին գործերու մէջ պահանջուած անխրո-
րականութիւնը կամ հաւասարութիւնը պա-
հելու համար : Ժողովուրդին կը մնայ յարգել
զայն, ու օգտուիլ անկից օրինաւորապէս :

Անհատ մը, որ իր նիւթական վիճակին
չնորհի, 75 դրուշ կամ ըստ կամեաւ աւելի տա-
լու դիւրութիւն ունի, այն միակ քուէի իրա-
ւունքը պիտի վայելէ ինչ որ կը վայելէ ուրիշ
անհատ մը, համեմատապէս համեմատ կացու-
թեան տէր, որ վճարած է սակայն իր 25
դրուշը : Իսկ եթէ գտնուին որ այդքանն ալ

զընան, կը նշանակէ թէ իրենց ընտրողական
իրաւունքը կորսնցուցած ըլլալին զրկանք մը
չեն համարիր :

Առաջնորդական ընտրութեան «եղանա-
կը» կը մտնեայ . կատարելի ընտրութիւնը
Եզրագրութեան ընդհանուր հայութեան բաղձանքին
համապատասխան ըլլալու համար, պէտք է որ
Երեսփոխանական ժողովը ամբողջացուի կամ
վերակազմուի . ու թ. քուէով պաշտօնի կոչուած
եկեղեցական մը ընտրականաբար նոյն ինքնա-
վատահոգութեամբ ու սիրով չի բաղմիր իր ան-
ունի վրայ, որքան եթէ քուէի քուէի մեծա-
մասնութիւն մը գտնէր . և այս ամբողջացման
ու վերակազմութեան համար, ընտրողներէն
պիտի ուղուի աղքատները և անոնց պիտի
խրկուի քուէի թիւը : Ժողովրդային հանրա-
գիւնները կրնան բարոյական աղքատութիւն մը
ունենալ ընտրութեան մը վրայ, բայց ոչ իրա-
կան արդիւնք : Քուէն պիտի որոշէ հանրու-
թեան կամքը և արժանաւոր առաջնորդ մը
ունենալու փափագող ազգայինները նա-
խանձախնդիր պիտի ըլլան անշուշտ վայելե-
լու իրենց քուէի իրաւունքը :

ԱՅԺՄԷՈՒԹԻՒՆ

Ճակատագրային դժբաղդաբխներ կան
որոնց սպառնալիք կրկնապէս ցաւառիթ
կը դառնայ, ինչպէս Ռուսացի փանիոն-
սարանին պայքարն զոն գացող ուրախի
չափ հայ գաղթականներուն եղեակական վախ-
ճանքը : Պոլսոյ կոստրածներէն խոշո սաշու
համար՝ թողող տուն տեղ եւ գործ, Պոլիս-
րիս ապաստանիչ, ու յանկարծ՝ անօրինա-
բի գործաւորներու պէս՝ մահերուն ամենէն
անոնքին գտնէր : Ազգային դժբաղդաբխն մը
աւելի ծանր եղա՞ծ է երբեք քան վերջին
սարիներս զմեզ տարնող, հաշտական վա-
րող ու չխցնող աղէտներու շարքը :

Թանի թղթակիցը շատ արժանիկ և կա-
րագրութիւն մը քրած է օգոստոս 6ի այդ
արկածին զոր հետագիւրջ երկու երեք քառով
հաղորդած էր, առանց իսկ յիշելու թէ մեռ-
նողներն ի՞նչ ազգէն էին : Այս կիրակի միայն
երոստական Սուրհանդակը բերաւ մեզի ա-
նոր իմաստը մանրամասնութիւնները :

Ուրբաթ, 6 օգոստոս, ժամ երկու քուէսին յետ
միջօրէի, ճիշդ այն պահուն ուր Զերտինան իշխանն,
ի դարձին Պոլսոյէն, Գանուրի պոլիպոսական եղբոր
ստեղծ կը կոխէր, մեծագործ պայքարում մը ըստեցաւ

Ռուսացիքն երկու քուէսին հետադարձեալ,
ճիշդ ճիշդ զիստեցին : Ռ. անմիջապէս ետք, թանձր
ծուր մը պատեց քուէքը և վառողի կծու հոտ մը
ծառագոյտ տմեն կողմ : Նոյն և առաջ attentat մը
կարծեցին, բայց շատ չանցած՝ լուր տարածուե-
ցաւ թէ մէկ միլիոն փոսիւնտ և մեծ որսնակ վա-
ռագ գորս իշխանապետութիւնը վերջերս ծախած էր
Եւրոպայի եղբայրներուն, լոնկեր են : Ռ. ամեն
մարդ, բնագոյնաբար, զէպ ի արկածին վայրը սկսաւ
վազել :

Ահա՛ առաջին փոխադրութեան ամբողջ նպատակը
ներ կուղղեն մեզի, գրեթէ չի կրնար խօսիլ : Ա-
մենքն ալ սեփ սեւ կորած են, ամուսին պէս, շա-
տեր լոյսովին մերկ, ոմանք գետին կիցնան ու ալ
չեն կրնար տարի ելլել : Մանրամարդ աղջիկ մը,
որուն հագուստներն ու մազերը բռնկած են, գետին
կիցնայ, անդամները գաղաթուր են, գետին
աղջիկ մը թող չի տար որ հագուստներն հանեն
վրայէն ու ինքն ալ կիցնայ՝ ալ՝ չեղարու համար :
Գիտնենք հետզհետէ կը բողբոսանան, քուէ, տա-
ներկու, բառն : Կենդանի բայց զէպ ի Գանուր կը
վազեն ու գետը կը նետուին կործան, փրկութեան
յուսով : Հոտները կը բռնէ կը տանի զանոնք : Խոտերն
անգամ բռնկած են . գետինը ծածկուած է փամ-
փուշներով, այրող մօի սոսկալի հոտ մը կ'օդադնի
կը խեղդէ : Սովայն ճիշդը նուազ սուր, նուազ
յարածուն կը դառնայ . մահը արդէն իսկ սկսած է
իր տերութիւնը :

Ներկայները չեն գիտեր ո՞ր մէկին օգ-
նութեան հասնիլ . կրակը կը շարունակէ ա-
հագիւն ճարձատխաններով ու քրհակիրներն
անկարող են մարելու : Ոչ ոք կը համարա-
կի մօտեմալ ծխաշունչ շէնքին, վառն գի
փամփոշաւանէն տար մեղր հեռուն վառո-
ղի մթերանոց մը կայ . եթէ ան ալ բռնկի՞ :

Ինչ որ ամենէն աւելի վայրագ ու հա-
կանարդկային կը դարձնէ այս արկածը,
ձեռնարկներուն այն մեղադրելի տնտի-
նութիւնն է, որով կոպակիի տակ առած են
եղեր գործարանին դռները, թող չի սաշու
համար որ քանոնները դուրսի հետ յարա-
բերութիւն ունենան . ու այսպէս, շատեր ո-
րոնք պայքարումն վնասուած չէին ու կրնա-
յին ազատիլ, երբի ճամբայ մը չի գտնելով
իրենց աղէտ, ողջ ողջ այրեր են :

Չոհերուն մեծագոյն մասը տղաքներ, ե-
րիտասարդներ ու դեռասի աղջիկներ էին,
սասնէն քան սարեկան : Խեղճերը, հացեր-
նին ճարելու համար՝ օրակա՞ն 50-80 ասն-
դիմի փոխարէն յանձնառու եղած էին՝ հին
փամփոշները փակելու եւ կապարք վա-
ռօղէն զատելու վնասաւոր աշխատութեան :
Տարեցներ ալ կային անոնց մէջ, վիճելու
50-60 տարեկան, Պոլսեցի ու գաւառացի
հայեր :

Վերադարձները — կը շարունակէ Թանի Թըղ-

խաղաղորդ ար արհեստներ եղած է այս բառակցի տե-
սարանին — կը բաշխուեն իրենց այրած մարմինը,
կը սողակին գետին վրայ, ջուր խնդրելով: Աճիսա-
ցած, մոսկայացած, անձանց մեռելներու շարք մըն է
որ կերկնայ: Հոս հոն՝ բունն անջատուած գլուխ
մը, սրկուած բաղակ մը: Ախտները կը գաղտնի
տակալին ոգեւորի ջրածգութիւններով: աստէն ա-
տեն հովը կը վանէ հրդեհին ծուխը, երեւան բերե-
լով զիսկներու կուտակում մը:

Քիչ ետք հիւանդանոցը կայցելեմ. վիրաւոր-
եալները կը մեռնին հետզհետէ: Երեսունի չափ ան-
կողիններ շարուած են բակի մը մէջ, ծառերուն
տակ: Օրհնատիւները ամենքն ալ ծածկուած են
սաւաններով ու կենդանութեան նշան չեն տար:
Քաղաքապետը, բժիշկները կեցած են, կը հսկեն ծը-
նողք, ազգական, կը վազեն կուգան իրենց սիրելի
զոհներու, բայց չեն յաջողիր. ամենքն ալ անխա-
ցած են, անձանց դարձած, ու անկարող բոտ մը
արտատանելու: Ահլը, ստիպել, բակին խորէն, ջուր
կը խնդրէ. արուա կին մը կը ճանչնայ այդ ձայնը
որ իր թոռնիկինն է: Ճիշ մը կարծակէ ու կը նստա-
ղի: Հինգ վայրկեան ետքը, տղան կը մեռնէր ան-
զին, առանց մեծ-մայրը տեսնելու:

Ռուսնոց ֆաղափն երկու օր առգ պա-
հեր է, եւ վառնայի Հայոց եկեղեցիին մէջ
հոգեհանգստեան պատարագ մատուցուե-
ալս արկածի տարաբաղդ զոհերուն համար:

Կ. ՊՈԼՍՈՅ ԴԵՊԲԸ

Յաւաքիկայ շարաթ իրիկունէ առաջ ան-
կարելի պիտի ըլլայ Եգիպտոսի լրագրութեան՝
ուղղակի տեղեկութիւններ ստանալ Կ. Պոլսէն,
օգոստոս 6/18ի դէպքին և անոր հետեւանը-
ներուն վրայ, վասնզի վերջին անգամ համառո-
տ երկու Սուրհանդակներէն մէկը մեկնած էր
դէպքին նախորդ օրը, երկուշաբթի, ու միւսը՝
նոյն օրն իսկ: Բարեբաղդաբար, Եգիպտական
Սուրհանդակը կայ որ կը դարմանէ թէ՛ այս
յապաղումը և թէ՛ մանաւանդ հեռագրական
գործակալութեանց թերին: Այս վերջիններն՝
ուրիշ օրէ ի վեր յորում ընդհանուրին ուշադ-
րութիւնը Պոլսոյ վրայ կեդրոնացած է զիտ-
նալու համար թէ ի՞նչ կանցնի կը դառնայ
հոն, հազիւ ուրիշ հեռագիր հաղորդեցին,
անոնք ալ անկատար, անորոշ և նպատակա-
ւոր, ամեն բան Հայերուն վրայ բեռնող:
Այսպէս, կիրակի առաւօտ զարմանքով կար-
դացինք ինքնութիւն հեռագիր մը որ կըսէր թէ
«Երկու հայեր, ոչոնց քով ռուսներ կը գտնու-
ուէին, ձերբակալուելով ի Բերա, տան մը մէջ,
խոտովաներ են թէ նպատակ ունէին atten-
տել մը ընել գերմանական և ռուսական
դեսպանատններուն դէմ»: Վերջին ծայր
վերապահումով միայն կարելի է հաւատ ըն-
ծայել այս լուրին, եթէ երբէք հաւատ ըն-
ծայող գտնուի. մինչեւ այս վայրկեանս, տի-
րոջ կարծիքն այն է թէ ասոնք թուրք կա-
ռավարութեան յերկրած ու ծաւալած լու-
րերն են, գեսպաններուն հակառակութիւնը
հրաւիրելու համար հայերուն վրայ, իբր թէ
բաւական չըլլար անոնց անտարբերութիւնը:
Մեր հայասէր պաշտօնակիցը Բոսկրէ շատ
իրաւամբ գիտել կուտայ թէ այս հեռագրին
նպատակն է անշուշտ՝ այնպէս կարծեցու-
նել թէ հայերուն դէմ սկսուած նորանոր
հալածանքները, ի մէջ այլոց, նշանաւոր ծա-
ւայութիւն մը մատուցած են Գերմանիոյ
և Ռուսիոյ: Կ. Պոլսոյ հայերու տուններէն ռուս
բեր գտնելը դիւրին գործ է, վասնզի շատ
անգամ ոստիկանութիւնը ինքն իսկ կը գտնու-

ղէ զանոնք, խուզարկութիւններ ու ձերշա-
կալումներ կատարելով հանդերձ: Պալով ձեր-
բակալուողներու խոտովանութեան, դժուար
չէ ուղղուած ձեւով խոտովանութիւններ ձեռք
բերել եւ վրի մը մէջ ուր խիղճ չեն ընել բան-
տարկեալները չարչարելու:

Երկրորդ հեռագիրը զոր Ռիթէրի գոր-
ծակալութիւնն հաղորդեց, հետեւեալն էր.

«Կ. Պոլսոյ, 23 օգոստոս. — Դեսպանները
նամակ մը ստացան հայ յերաբխական մաս-
նախումբին կողմէ, 1896ին իրենց ստացած
նամակին նման, յայտարարող թէ Հայերը
այլեւս յոգնեցան սպասելէ և թէ որոշած են
գործել»:

Երէկ և այսօր ո՛ր և է հեռագիր չի հա-
սու Կ. Պոլսէն:

ԹՈՒՐԲԵՒՊԱՐՍԿԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԳԼԵԻՆ ՎՐԱՅ

Թուրքեւպարսկական սահմանադրին վը-
րայ պատահած դէպքերուն սովոր հասած
հակառակ հեռագիրներէն հետեւեցած
էինք արդէն թէ հոն ալ, ինչպէս ի Կ. Պոլսոյ,
կուղուի հայերը իրեւ մեղաւոր ցցունել և
ամեն շփոթութիւն անոնց վերագրել:

Կ. Պոլսէն օգոստոս 17 թուականաւ եւ-
րոպական թերթերուն ուղղուած հետեւեալ
տեղեկութիւնը հաստատութիւն կուտայ տի-
րոջ այս կարծիքին.

«Պարսկական սահմանադրին վրայ, ի
Հէքքեարի, հայկական ենթագրիւ աղա-
ւանքը դիտմամբ չափազանցուած է ու անոր
իրական հանգամանքը չարամտաբար այլոյ-
լուած է: Յարձակողները թափառաշրջիկ պար-
սիկներ էին և շատ քիչ հայ կար անոնց մէջ:
Տաճկական աղբիւրէ բխած տագնապայի հե-
ռագիրներուն նպատակն է արդարացունել
հալածանքի դրութիւնը որ նորէն ձեռք կ'առ-
նուի հայերուն դէմ: Ի. Դրան քաղաքակա-
նութիւնն ըլլալ կը թուի՝ յուսահատութեան
մղել զանոնք. այսպէս, հրահանգ ուղղուած
է դաւառաց կուսակալներուն պատուիրելով
անոնց որ թոյլ չի տան որբանոցներու շինու-
թիւնը կամ բացումը այն հայ տղաքներուն
համար որոնց ծնողք ջարդուած էին»:

Երէկուան Մարտիկոյ Սուրհանդակով ե-
կած թերթերուն մէջ ալ կը կարդանք հետե-
ւալ ուշագրաւ լուրը:

«Լոնտոն, 18 օգոստոս. — Կ. Պոլսէն կը
հեռագրեն Թալազին թէ Գիւրտիստանի մէջ
տիրող անիշխանութեան պատճառաւ, Դուռը
հրամայեց է որ արեւելեան նահանգներուն
մէջ զօրքերն ընդհանուր կերպով շարժուին վի-
ճակի մէջ գրուին»:

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Օրմանեան Պատրիարքը, իր ընտրութենէն
ի վեր, առաջին անգամ ըլլալով փափուկ կա-
ցութեան մը հանդէպ կը գտնուի: Մինչեւ
ցարդ իր գործունէութիւնը սահմանափակ-
ուած կը մնար՝ Պատրիարքարանի, Հիւան-

դանոցի, եկեղեցիներու, առաջնորդական թա-
վուր փեմակներու, որբերու պաշտպանութեան
և ասոնց նման զբաղումներու մէջ: Հայկական
խնդիրը ու զայն խղճելու համար թուրք կա-
ռավարութեան պահանջումները կուգան կը
կանգնին յանկարծ իր դէմ: Ի՞նչ ընթացք
պիտի բռնէ, ի՞նչ քաղաքականութեան պիտի
հետեւի իր խորհրդականներուն՝ Քաղաքական
ժողովի անդամներուն հետ, որոնք մեծ մա-
սով պետական պաշտօնատարներ են: Այս
հարցը կը շարժէ ամէն հայու հետաքրքրու-
թիւնը:

Մենք մասնաւոր լուր մը չունինք Պոլսէն,
Պատրիարքարանի շրջանակներէն, բայց Աթէն-
քի Լը Քօմպլսին և Աղեքսանդրիոյ Պառլի-
ստացած թղթակցութիւններուն նայելով, առ-
կից իրը երկու շաբաթ առաջ Պատրիարքը
պալատ հրաւիրուելով թիկնապահի մը միջո-
ցաւ, առաջարկուեալ է իրեն՝ յայտարարութիւն
մը ստորագրել որով ստանձնէ Հայոց բոլոր
արարքներուն պատասխանատուութիւնը և
պախարակէ ապստամբական շարժումները:
Օրմանեան Պատրիարքը պատասխանեց է թէ
ինք արդէն չըջարեւական-կոնդակներով հա-
ւատարմութեան ու խաղաղութեան յորդորներ
կարդացած էր ժողովուրդին. բայց թէ իր իրա-
ւասութենէն դուրս է Թուրքիա մտնող օտարա-
հպատակ հայերուն կամ Թուրքիայէն դուրս
գտնուող հայերու արարքներուն միջամտել: Մի
ենոյն ժամանակ, բողոքել է պատուաւոր և ան-
վստահողայիններու բնակարաններուն մէջ կա-
տարուած ոստիկանական խուզարկութիւննե-
րուն ու բաղմամբիւ ձերբակալութիւններուն
դէմ որոնք վերսկսած են:

Յիշեալ երկու փրանսերէն թերթերու (ու-
րոնց մէկին տնօրէն-խմբագիրը հայ է ու միւ-
սինը՝ յոյն) սոյն տեղեկութիւններ կը վերա-
բերին օգոստոս 6/18ի դէպքին նախնիթաց
օրերուն: Անցեալ չորեքշաբթիէն ի վեր, դիւ-
րին է դուշակել թէ կացութիւնը աւելի ծան-
րացած է և Պոլսոյ Պատրիարքը մեծ շրջահա-
յեցութիւն, կոյով ու անձնուրացութեան հաս-
նող ազգասիրութիւն մը ի յայտ բերելու պէտք
ունի. ահա՛ ինչ որ կը սպասուի իրմէ ազգին
այս ճգնաժամին մէջ:

Այրի Տիկին Բաֆֆիի հրաւերը՝ իր ողբացեալ
ամուսնոյն երկաթիւթեանց տարագրութեան համար՝
համակիր ընդունելութիւն գտած է Եգիպտոսի ըն-
թերցասէր ազգայնոց կողմէ: Կը փութանք ծանու-
ցանել անոնց որ կուգեն բաժանորդագրուիլ թէ
մինչեւ օգոստոս 31 կրնան դիմել ի Գաշիքէ, Տիար
Մ. Անանեանցի (իր գրասենեակը, Համմամ-էլ-Թա-
լաթ փողոց, Օսուրի վաճառատան դէմ) և Աղեք-
սանդրիա Տիար Պերճ Օճանեանի օրոնք ազնուա-
բար յանձն առած են զիւրութիւն ընծայել Տիկին
Բաֆֆիի սոյն գրական ձեռնարկին:

Ստացած ենք Աղեքսանդրիոյ Գաղթականաց
Յանձնաժողովոյ գործառնութեանց ընդհանուր հաշ-
ուեկիւրը զոր պիտի հրատարակենք յաջորդ թիւով:

Շաբաթ օրը ընտանեկան պարզ հանդէսով մը
տեղի ունեցաւ Տիար Մարտիկ Բրուտեանի ամուս-
նութիւնն Օր. Գենովարէ Եագուպեանի հետ: Տիար
Բրուտեան Գաշիքէի Զորի ընկերութեան պաշտօն-
եայնէրէն է, և իր աշխատութեան բաժինը կը նը-
ւիրէ տեղական տղապիւն գործերուն, մասնակցելով
հոգարարութեանց: Օր Եագուպեան կը պատկանի
վաղուց ի վեր Եգիպտոս հաստատուած պատուաւոր
ընտանիքի մը:

ՄԱՁԵՐԸ

Եթէ կինը իր եօթը շնորհները չունենար (եօթը թուանշանին ամենէն հաճելի գերն է ասիկայ) այս, եթէ կինը իր եօթը շնորհները չունենար, կարծեմ թէ եօթը մահացու մեղքերուն և ոչ մէկը գոյութիւն պիտի ունենար այս աշխարհիս վրայ :

Դրախտին համով մեղքէն սկսեալ մինչեւ անցեալ օրուան Ալէքսիանիին ոճիքը, չկայ չարագործութիւն մը որու մէջ մասն չունենայ կինը :

Cherchez la femme գիտութեան ծառին տակէն կտրուի :

Կեանքը իր հրապարակէն շատ բան չպիտի կորսնցնէր եթէ եօթին տեղ տալու եօթը կամ քսաներեօթը մահացու մեղքեր գտնուէին, բայց ապրիլը ինչ հաճոյք պիտի ունենար եթէ եօթին տեղ միմիայն վեց շնորհներ ունենար այն սեռը որուն կը պատկանին ժամ ա՛մաք, Քրէստը Մէրթը, Էդուարդէի որդի վայնախաղ Շաֆիլան և կամարի տակի ամբողջ Սիլվիոյ զինուորականները, առանց մասնաւոր այն սեռի զաւակներ հարկաւորականները որ ի խնդիր յաճախորդի մը իրենց անբարոյականութեան միջոցով կը ցանկանան Գաֆէլ Էմիլիոյնէն մինչեւ Պարսը Լ'Օրթը :

Եւ որո՞ք են, պիտի բռնէ, կիններուն եօթնական շնորհները :

Եթէ կուզէք միտող համբեր :

1. Մազերը, 2. աչքերը, 3. բերանը, 4. ձեռքերը, 5. կարծքը, 6. սրունքները և 7. . . լեզուն :

Մազերը. — Կուզեն խորտեալ ըլլան կուզեն սեւ (յաւաքան է որ կարմիր չըլլան) մազերը կնոջ ամենէն հրապարակ մասը կը կազմեն :

Եւ ասոր համար է որ երբ կինը իրենց տղա զուգարը ընելու կելնէ, նախ մազերնէն կտրուի :

Ծոծրակի մը վրայ խայտալույս մազի նուրբ թելերը այն փորձութիւնը կուտան մարդու, որուն նոյն ինքն Սարգիսն չէ գիտցած :

Աչքերը. — Հոգեւոր արտահայտութիւնը, սրտին թարգմանիչը և զգացումներու Guide Beadeker-ներն են աչքերը :

Մէկ ակնարկով կինը տեսլի շատ բան կրնայ հասկնալ իրեն յարմար ամբողջ Encyclopedie-ները կինը իր աչքին մէջ կը գտնէ բոլոր գիտցելի որ արդարեւ իրեն ամբողջ գոնեքը բայց են առջիկ :

Բերանը. — Երկու պաշտօններ. ժպտիլ, հարկուրել : Եւ մասնաւոր չափ սղակ լայն մը ատկէջ աւելին կարելի չէ պահանջել :

Ձեռքերը. — Ամենէն չորափելի հրապարակ է կնկան : Ձեռքի մէկ սեղմումի մէջ տնտեսի արանջները և տնտեսի հեշտանքներ կան որոնք ինձ զարմացնել կուտան թէ ինչպէ՞ս անոնցմէ զոտ էրիկ մարդու ձեռքեր ալ կը սեղմենք որը տալն անգամ :

Կուրծքը. — Անոր երեւելին արդեօք զոտը և ոչ մէկ փոթորիկ կրնայ ազդել :

Կուրծքի հարմար տղաք կը սնունդին, իսկ անոնց տեսքէն մարդիկ կան որ կը մեռնին :

Սրունքները. — Պատուանդանն է այն որուն վրայ Սրունքը իր զրկի գործող կանգնած է :

Սրունքի և տանիքէն խառնուրդի մը տակէն երեւցած արունքներու տեսարանը Զուգարից և ոչ մէկ անկիւնը ունի : Այս բառերն են :

Լեզուն. — Սիրտու կնկան մը լեզուն նոյն իսկ սուտ ըսած ատենը հրապարակ մը ունի որուն գոյութիւնը . . . սիրտու մարդուն հարցոյցէր :

Այս եօթը շնորհներուն մէջն ամենէն կարեւորը, ամենէն հրապարակը, ամենէն գեղեցիկը, ապահովագլու մազերն են :

Անոնց գերը և ոչ մին ունի : Գոյունքի համար մէկ հատիկ են ունենալ ի վար թափուած մետաքսի թելերը զորս մենք մազ կը կոչենք բանաստեղծ ծնած չըլլալուն համար :

Մազերէ բխած երկտարականութիւնը, ոչ բերանը ունի և ոչ աչքերը : մեղք որ Էտիլան այդ ուժը չէ կրցած բանի մը օգտակար ընել :

Սիրտը մէջ մազերը մեծ կարեւորութիւն ունին : Տեսած էք սիրտհար մը որ իր սիրտը տղկուն մէկ աչքը, մէկ սկուտան և կամ մէկ եղունգը պահած ըլլայ իր անտաղտոն մէջ : Բայց ընդհանրապէս ամեն սիրտ իր սիրտը կնկան մազէն քանի մը թել պահած ունի իր զրպաններէն մէկուն մէջ :

Իրաւ է որ շատ անգամ այդ մազերը կամ պարզ գոյակս քրոջն են և կամ հորաբոջ ազնկանը :

Մազերու գերը միտակ սիրտը մէջ չի կայանար :

Ձեզ չէ՞ պատահած սիրած մէկ էակնուդ հետ աւրուիլ վշտանալ արդողիլ, նոյն իսկ պէ՞գալ :

Սէրը և կոխը երկու քոյրեր են :

Ենթադրեցէք որ կնոջ մը վշտացած էք եւ կուզէք փառաւոր դաս մը տալ իրեն : Ոչ Զուրու էք և ոչ ալ Թումպուդթուցի : Հետեւաբար ձեր վրէժը առնելու համար, ոչ անոր աչքը կը հանէք և ոչ ալ կը պատռէք բերանը :

Անգին մազերը կան, ձեր գործին կուգալ :

Կտաղած էք, կրակ ու բոց, սենեակին ամբողջ կարասիները կը կոտորէք : Ձէք գարուիր : Ձեր բարկութիւնը առհասարակ չունի, այն միջոցին գոնէն ներս կը մտնէ ձեր սիրած կինը :

— Ես ալ քեզ կը վնասէի կոր, կը պոռայ :

Մէկ կողմէն կը հայհուէք և միւսէն կապառնալնաք :

Տեղի պատասխաններ կուտայ ձեզի : Ալ ինքզինքնուզմէ կելլաք և կը ցատկէք վրան :

Առջի բանը որ ձեռքերնուդ կը հանդիպի՝ մազերն են :

Ձերբերկիւ կը խօթէք անոնց մէջ, անգամ մը կը դարձնէք և . . . հարկերին խնուստուն անգամ բարկութիւնով կ'ըջնայ :

Ահա ինչո՞ւ կը սիրեմ մազերը :

ՌԱՏԱՄԷՍ

ՕՐՈՒԱՆ ԼՈՒՐԵՐ

Մուրաւս պէյ, Միզանի խմբագիրը, ամսոյս 16ին Կ. Պոլիս վերագարձեր է Բարիդէն : Կրտսէի թէ պետական կարեւոր պաշտօն մը պիտի տրուի ժէճ-Թիւրքի կուսակցութեան այդ պետին :

— Մեծ Տէրութեանց համաձայնութիւնը խղճելու երկուցներ կը պատճառէ : Հաշտութեան բանակցութիւններուն դժուարացումը կը վերագրուի Լորա Սուրբաբի ընթացքին որ բաժնուիլ կուզէ եղբւր եւրոպական համաձայնութիւնէն : Կերմանիա եւս նոյն սպառնալիքը կընէ, եթէ Թեոֆիլոյ պարպուելուն վերաբերող յօդուածն իր առաջարկած եղանակով չընդունուի : Այս անորոշ կացութեան մէջտեղ, ձեւաւ փաշա իր իրաւասութիւնը ու ազդեցութիւնը կընդարձակէ Կրէտէի մէջ, կերպով մը կուսակալի պաշտօն վարելով : Անհաւանական չէ որ օրին մէկը քանի մը վաշտ օամ : զօրը հանել տայ կղզին, նոյն իսկ ծովակալներուն աչքին առջեւ : Հանեայի ֆրանսական հիւպատոսին պաշտօնանկութիւնը պահանջելու է՝ անշուշտ վստահելով Պ. Հանթօյի հաճոյակատարութեան վրայ :

— Պ. Ֆէլիքս Փօռ երկուշաբթի օրը Բէդրապուրի հասաւ իր հետեւորդներով : Ձարը իր զբօսանաւով Կրօնթաւա դադած էր ընդ առաջ Հանրապետութեան նախագահին, ուստի ժողովուրդին մէջ մեծ խանդավառութիւն կը տիրէ ամեն կողմ : Պ. Ֆէլիքս Փօռ միջօրէին Բէդէրհօֆ համբուով այցելութիւն տուաւ Ձարուհիին : Դիշերը, հացիկերով խառն, Ձարը սա իմաստով բաժակահառ մը արտասանեց. «Ձեր այցելութիւնն ի Ռուսիա և անոր առաջ բերած զգացումներուն անկեղծութիւնը աւելի եւս պիտի ամրապնդեն այն բարեկամական և համակրական կապերը որոնք Ֆրանսան Ռուսիոյ կը միացունեն» : Նախագահը պատասխանեց թէ ինք կուգար աւելի եւս ամրապնդել երկու երկիրները միացունող ջորաւոր կապերը :

Ինչպէս կը սպասուէր, գիտե՛լ կը տրուի թէ Ռուսիոյ կայսրն Ինչպէս ի Բարիդ, իր մայրաքաղաքին մէջ ալ չէ յօժարել «գաշնակցութիւն» բառն աշտատանելու, որուն անհամբեր կը սպասէր ֆրանսական ազգը :

ՏԵՂԱԿԱՆ

Բարձր. Խորիվը միա օրերս ծովային պըտոյտ մը պիտի ընէ իր Մահրուսա դրօսանաւով :

— Պէնի-Սուէֆի Մանշար-Էլ-Օմրա գիւղին մէջ մեծ հրդեհ մը ծագեցաւ նախընթաց օր : Գանի մը վայրկեանի մէջ հարիւր ութսուն տուններ կրակին ճարակ եղան : Տասներեք գործաւորներ, որ շունայի մը մէջ կուշխատէին, բոցերուն մէջ պրեցան, և չորս հոգի վիրաւորուեցան :

Նիւթական զնառը 700 սոկիէ աւելի չէ : Բայց գիւղին ընտելիները որ 1700 հոգիէ կը բաղկանան, գրեթէ ամենքն ալ անպատրաստ պար մնացած են :

— Եղիպտական երկաթուղեայ վարչական ժողովը նոյն վարչութեան երկեւեկութեան ճիւղի տնօրէն Խարէնտէր պէյ Ֆէհմիի արածութիւնն տուած է՝ տաւը սոկիէն վար ամառանով պաշտօնեայնէր ընարել :

— Կ. Պոլսոյ գերմանական դեսպանատան զինուորական կցորդ Պ. Մօրկան հրաման ըստապած է Եգիպտոս դալ, Սուտանի արշաւանքին հետեւելու համար :

— Եղիպտական թղթատարութեան ընդհանուր տնօրէն Սապա փաշա որ քանի մը ամսէ ի վեր Ամերիկայ կը գտնուէր և մասնակցած էր թղթատարական համաժողովին, երէկ առաւօտ Մէսսաթրիի շտեմնաւով Աղեքսանդրիա վերադարձաւ :

— Աղեքսանդրիոյ Մահմուտիէ ջրանցքին եղբւր կառուցուած թուղթի զօրծարանին պահապանին վրայ որ խտալացի մըն է, պէտէվիներ հրացանի հարուած սլարպած են առանց սակայն վնաս հասցնելու :

Այս սպաննութեան փորձին շարժառիթը եղած է այդ պէտէվիներուն զօրծարանէն արտաքսուիլը :

— Առողջապահական վարչութիւնն երէկ առաւօտ աշտատուր նիստ մը ընելով Աղեքսանդրիա, անգլիական պատուիրակին առաջարկութեամբ որոշեց Հիւկատտանէն եկող ուղեւորներուն դէմ դրուած քաղանթինան վերցունել : Եւ սակայն, ժանտախտը վերջացած չէ ի Պոմպէ և նախորդ շաբթուն 34 հոգի մեռած էին այդ համաճարակէն :

— Յուլիս 23էն 29 Գահրէի մէջ պատահած է 372 ծնունդ և 408 մահ : Աղեքսանդրիոյ մէջ 180 ծնունդ և 236 մահ :

ԵՐԵՒ ՏԱՐԻ ԵՏՔԸ

Բարիկի տիեզերական լորտեստահանքը որ 1900ին տեղի պիտի ունենայ, հրաշալիքներու, նուրա՛նոր գիւտերու շարք մը պիտի պարունակէ իր շրջափակին մէջ, որոնց վրայ հիմակուց Բարիդեան թերթերը շարացոյցիչ նկարագրութիւններ և հիւսիշ տեղեկութիւններ կուտան :

Եթէ ամեն առաջարկութիւններու և ծրագրերու կարեւորութիւնն տրուէր, պէտք պիտի ըլլար արտեստահանքէն յատկացեալ գետինը տալն ան, զում մեծցնել : և այսպէսով հազիւ գոհացում պիտի կրնար տրուիլ այն ամեն գիտում ընդոներուն որոնք հոգաւորներով կը համբուին :

Շուտ մը նշանաւոր ծրագրիներու մէջ, ուշադրութեան արժանիներ կան զորս օրը օրին կը թուէ Բարիդեան մամուլը :

ԴՐԱՄԱՏՈՒՆ ԱԼԵՔՍԱՆՏՐ Ժ. ԲԵՍՍԱՉՈՂԼՈՒ Գ Ա Ն Ի Ր Է

Վիզդընսոն անուն մէկը կատաղարկէ երկրորդ Թուր Էֆէլ մը չինեւ առաջնայն զիմայը և երկու բը միացնել տակախ կտուրջով մը:

Պ. Կիւթմալ Սօմէօ կատաղարկէ երկու անգամ զին արձան կանգնել որոնց մին ներկայացնէ խաղաղութիւնը և միւսը Պատերազմը, որոնց հակա պատկերէն սա արգիւնը ստալ պիտի գայ որ ժողովուրդը խաղաղութիւնը պիտի սիրէ:

Պ. Ճօն Ռիչարտսըն 320 մէթր բարձր և ինքն իր վրայ դարձող բուրգի մը ծրագիրը ներկայացուցած է արուեստահանգլիսի յանձնաժողովին:

Պ. Մազըլէն զիտաւորութիւն ունի 400 մէթր բարձրութիւն ունեցող տուն մը կառուցանել որուն տանիքին վրայ փոխանակ սպասուհիները պատկերցնելու... հրեշտակներու pied à terre մը ըլլալու պիտի ծառայեն:

Պ. Պոլֆա կատաղարկէ երկու արձան չինեւ մին էրիկ մարդը ներկայացնող միւսը կինը. ամեն մէկը բնականին երկու հարիւրապատիկ մեծութիւնը պիտի ունենայ:

Պ. Հէրի Պէնքս զիտաւորութիւն ունի եռաթեւ աշտանակ մը չինեւ որուն ամէն մէկ թեւին վրայ քանի մը հարիւր հոգի պիտի կրնան պտտուիլ:

Օրիորդ Բալֆ փեթեր ժողոված մէջ կը նետուի և զիտաւորութիւնը կը յայտնէ մեքենական փղ մը չինեւ տղոց համար և չափահասներուն համար հոյակապ աղբիւր մը որմէ թէյ պիտի թլիսի:

Պ. Պոնտի ծրագիր մը ունի որ կը կայանայ 19րդ դարը ներկայացնելու մէջ, ամբողջ մօզաիկէ չինեւած յիշատակարանով մը որ պիտի պատկերացնէ Եւրոպայի մեծ տէրութիւնները, երկրագունտին հինգ մասերը, գիտութեանց և ուսմունքներու յառաջդիմութիւնը և կառավարութիւններու ձեւը:

Պ. Պոտոնիս պիտի ներկայացնէ Բարիլքապուրը ասկից հարիւր տարի ետքը:

Պ. Շառլ Բուանաո կատաղարկէ ծառուղի մը չինեւ որուն երկու կողմը պզտիկ պզտիկ պահականոց ներ կանգնուին: Այս պահականոցները պիտի պաշտպանեն իրենց մէջ գինուորներ որոնք հազած պիտի ըլլան զատ զատ մինչեւ հիմա Զրանայի մէջ գործածուած բոլոր գինուորական համազգեստները:

Շատ մը ուրիշ առաջարկութիւններ ալ կան շորս տպագային կը վերադառնան:

Ա Ձ Դ

Տիկին Սոֆիկ Ազգապետեան, մանկաբարձ, վկայեալ կայսերական վարժարանէն, այժմ բնակութիւնը Գա. հիւր հասցասած ըլլալով, պատիւ ունի ծանուցանել հայ հաւատարմութեան որ պատրաստ է իր խնամքները ալ իրեն պէտք ունեցողներուն:

Իր երկարամանակեայ փորձառութիւնը եւ խրդնամիտ աշխատութիւնը զինքն բաղաժիտ առաջնա կարգ մանկաբարձեան կարգը կանգնեցնելու:

Իմեւ Շուպրա, Չամաթի փողոց թիւ 12: Նր. կուտաքի եւ հինգաքի օրերը առաւօտուն կը գրծուի Սարաֆեան դեղատանը ի Պէն-Էլ-Սուրեհն:

ԴԻԻՐՈՒԹԻԻՆ, ԴԻԻՐՈՒԹԻԻՆ, ԴԻԻՐՈՒԹԻԻՆ

Ստորագրեալ պատիւ ունիմ ծանուցանելու քե պատրաստ եմ դիւրամասշտի տկոսով փոխառուութիւն ընել մեր հայ գաղթականներուն որոնք գրաւ իր ձեռքին դիւրաւութեան կը հանդիպին խղճամիտ սաւառ մը գտնելու:

Խանութիւն մէջ կը վաճառուին նաեւ տեղական վիճակահանութեանց տոմսեր, ամսական վճարումներով:

Ս. ԶՈՒՐԻԿ ՕՂԼՈՒ

Շառա Ապս-Էլ-Ազիզ, բարոնին կից

ՏՕՔԹՕՐ ԼՕՆԿ

ՏՐ. ԼՕՆԿ, մասնագէտ կանանց, ստամոքի, մոր. քի եւ չլային հիւանդութեանց: Կ'ընդունի իրեն զինով հիւանդները Մեզօն Զահար, Շեքիթ Զօքիլի հիւրդ դէմը. ամեն օր առաւօտեան ժամը 10էն 12 եւ կէս օրէն վերջ 3էն 5: Բոլոր վկայեալ աղբաւթքը կը դարմանուին:

Le Gérant: HENRY SAKAKINI

Տպագրութիւն ՓԱՐՈՍ լրագրի

Ուզողներու համար լուսարարութեան հիւր մ'ալ աւելցուած է, որ յաճախորդներուն հերմակեղէնները զատ զատ լուսարար հաւատելի գրութիւնը հաստատած է:

Ի դիւրութիւն յաճախորդաց հերմակեղէնները ինք անձամբ պիտի առնէ տուններէն և պիտի վերադարձնէ:

Յ. ԵՒ Կ. ՄԱԹՈՍԵԱՆ ԵՒ ԸՆԴ.

ԳԱՆԻՐԷ ԵՒ ԱՂԵՔՍԱՆԴՐԻԱ

ԵԳԻՊՏՈՍԻ ՄԷՋ ԾԽԱՆՈՏԻ ԵՒ ՍԻԿԱՌԷԹԻ

ՍԵՏԱԳՈՅՆ ԳՈՐԾԱՐԱՆ

ԸՆԳՆԱՆՈՒ ՄԵՐԵԱՆՈՅ «ՇԱՐԱ ԱԶԿԱՄ»

ԽԱՆԸ ԴԱՍԱՐԱՆՆԵՐՈՒ ՂԵՄ:

ԸՆԹԱՑԻԿ ԳԻՆ ՍԻԿԱՌԷԹՆԵՐՈՒ

Սիկարէթ Ռուսեալ 1000 հատը 2 1/2 Անգ. ոսկի

»	Խըրիլեալ	»	»	2	»	»
»	Պալատական	»	»	1 1/2	»	»
»	Պօհնա	»	»	1 1/4	»	»
»	Նաթիլե	»	»	1	»	»
»	Փօռ	»	»	20	Փրանք	

ԵԳԻՊՏԱԿԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻՔ

ԺԱՄԱՆԱԿԱՆՈՅՑ ԵՐԹԵԻՆԿՈՒԹԵԱՆՑ

Սկսեալ 1 Փետրուար 1897

ԳԱՆԻՐԷՆ ԱՂԵՔՍԱՆԴՐԻՈՅ ԳԻԾ

Կ Ա Յ Ա Ր Ա Ն Ք	Խառն 1,2,3,4գ.	մանկ. 1,2,3,4գ.	կէս ուղ. 1,2,3,4գ.	մանկ. 1,2,3,4գ.	Էքսորէս 1, 2 4գ.	մանկ. 1,2,3,4գ.	Էքսորէս 1, 2 4գ.	մանկական 1 2 3 կարգ	
								երեկ.	երեկ.
Գահիրէ	մեկ.	4 45	—	7 —	8 15	9 30	3 30	4 45	7 15
Պէնհա	»	8 —	—	7 49	9 32	10 15	4 47	5 29	8 32
Թանթա	ժամ.	11 28	—	8 30	10 30	10 55	5 45	6 7	9 30
	մեկ.	11 48	6 —	8 34	11 15	11 —	6 26	6 11	—
Տամանհուր	»	3 10	7 34	9 41	12 49	11 58	7 59	7 7	—
Աղեքսանդրիա	ժամ.	6 25	9 15	10 45	2 30	Էքսորէս 1 —	9 40	8 7	—

ԱՂԵՔՍԱՆԴՐԻՈՅԻ ԳԱՆԻՐԷԻ ԳԻԾ

Կ Ա Յ Ա Ր Ա Ն Ք	մանկ. 1,2,3,4գ.	կէս ուղ. 1,2,3,4գ.	մանկ. 1,2,3,4գ.	Էքսորէս 1 2 4գ.	Խառն առտ.	մանկ. 1,2,3,4գ.	Էքսորէս 1 2 4գ.	մանկական 1 2 3 կարգ	
								երեկ.	երեկ.
Աղեքսանդրիա	մեկ.	—	7 —	7 15	9 —	9 20	2 30	4 15	6 15
Տամանհուր	»	—	8 6	8 58	10 2	Էքսորէս 12 14	4 13	5 15	8 6
Թանթա	ժամ.	—	9 12	10 28	11 —	2 39	5 43	6 10	9 40
	մեկ.	6 15	9 16	11 20	11 5	2 49	6 30	6 14	—
Պէնհա	մեկ.	7 18	9 59	12 23	11 46	4 43	7 33	6 52	—
Գահիրէ	ժամ.	8 30	10 45	1 35	12 30	6 25	8 45	7 35	—

ԳԱՆԻՐԷ-ՍԻԻԷՋ

ՊԵՆԶԱՅԻ ԶԱՄԲԱՅ

ՍԻԻԷՋ-ԳԱՆԻՐԷ

ԿԱՅԱՐԱՆՔ		ԱՌԱՌՑ		ԵՐԵԿՈՅ		ԿԱՅԱՐԱՆՔ		ԱՌԱՌՑ		ԵՐԵԿՈՅ	
Գահիրէ	մեկ.	11 40	Էքսորէս	7 —		Սիւէզ (բարափ)	մեկ.	9 50		—	
Պէնհա	ժամ.	12 28	Էքսորէս	7 48		» կայարան	»	—		3 30	
	մեկ.	12 33	Էքսորէս	7 53		Իսմաիլիա	»	1 20		7 5	
Զակաղիկ	ժամ.	1 34	Էքսորէս	8 54		Զակաղիկ	ժամ.	3 7		8 53	
	մեկ.	1 44	Էքսորէս	9 4				3 17		9 3	
Իսմաիլիա	մեկ.	3 40	Էքսորէս	1 —		Պէնհա	ժամ.	4 13		9 47	
Սիւէզ կայարան	ժամ.	—	Էքսորէս	5 —				4 17		9 4	
Տօք (քարափ)	ժամ.	6 55	Էքսորէս	—		Գահիրէ	ժամ.	5 5		10 35	